ք.Երևան

«29» մարտի 2022թ.

«ԻԶԻ ՓԵՅ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ «EASY WALLET» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՈՎ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴՐԱՄԱՊԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետով, «Իզի Փեյ» վճարահաշվարկային ՍՊԸ-ի կանոնադրության 8.15 կետով, ինչպես նաև հիմք ընդունելով «Իզի Փեյ» վճարահաշվարկային ՍՊԸ-ի տնօրենի 2022 թվականի մարտի 22-ի թիվ 2022/009 հրամանով սահմանված կարգով անցկացվող հետվճարի ակցիան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2022 թվականի ապրիլի 1-ից հունիսի 30-ը ներառյալ անցկացնել մրցույթ «Gedeon Richter» (տառադարձությամբ՝ Գեդեոն Ռիխտեր) ապրանքային նշանով շահագործվող դեղատների ցանցի դեղագետ-վաճառող աշխատակազմի համար:

2. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված մրցույթի պայմանները հաստատել սույն հրամանի հավելվածով:

3. Սույն հրամանը գործում է գործում է մինչև դրանով սահմանված գործընթացների ամբողջական կատարումը:

Տնօրեն /_____/ Մ.Գաբրիելյան

Կ.Տ.

Հավելված

«Իզի Փեյ» ՍՊԸ-ի տնօրենի 2022 թվականի մարտի 29-ի թիվ 2022/011 հրամանի

«Gedeon Richter» (Գեդեոն Ռիխտեր) ապրանքային նշանով շահագործվող դեղատների ցանցի դեղագետների համար անցկացվող մրցույթի կանոններն ու պայմանները

1.1. Սույն կանոններով կարգավորվող ակցիան (այսուհետ՝ Ակցիա) «Իզի Փեյ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից կազմակերպվող **«Easy Wallet»** էլեկտրոնային վճարային համակարգի (այսուհետ՝ ԷՎՀ) օգտատերերի համար անցկացվող ծրագիր է, որը նպատակ ունի խրախուսել նույնականացված օգտատերերի կողմից ԷՎՀ-ով վճարումների կատարումը և այդպիսով ընդլայնել **«Easy Wallet»** ԷՎՀ իրացվելիության մակարդակը և օգտատերերի շրջանակը:

1.2. Սույն կանոններով սահմանվում են «Gedeon Richter» (հայերեն տարադարձությամբ՝ «Գեդեոն Ռիխտեր») ապրանքային նշանով շահագործվող դեղատների ցանցում 2022 թվականի ապրիլի 1-ից հունիսի 30-ը ներառյալ դեղագետների կողմից գնորդ հանդիսացող «Easy Wallet» ԷՎՀ բջջային հավելվածը ներբեռնած, անձը հաստատող փաստաթղթի կամ բանկային քարտ կցելու միջոցով նույնականացված էլեկտրոնային դրամապանակի օգտատերերին վճարումներն ԷՎՀ-ով կատարելուն ուղղորդելու համար անցկացվող մրցույթի պայմանները:

1.3. Մրցույթի շրջանակներում «Gedeon Richter» (հայերեն տարադարձությամբ՝ «Գեդեոն Ռիխտեր») ապրանքային նշանով շահագործվող դեղատներից յուրաքանչյուրում մրցույթի մեկնարկի օրվանից ամսական պարբերականությամբ ԷՎՀ-ով քանակական առումով ամենաշատ վճարումն ընդունած թվով 3 /երեք/ դեղագետները կարժանանանա մրցանակների:

1.4. Սույն կանոնների 1.3 կետի իմաստով ամսական հաշվարկը կատարվում է օրացուցային ամսվա սկզբունքով: Յուրաքանչյուր նախորդող ամսվա տվյալները ամփոփվում են մինչև յուրաքնաչյուր հերթական ամսվա հինգերորդ աշխատանքային օրը, իսկ «Gedeon Richter» (հայերեն տարադարձությամբ՝ «Գեդեոն Ռիխտեր») ապրանքային նշանով շահագործվող դեղատներից յուրաքանչյուրում մրցանակի արժանացած դեղագետների մրցանակները տարամդրվում են տվյալների ամփոփմանը հաջորդող օրվանից երեք աշխատանքյաին օրվա հաշվարկով:

1.5. Սույն կանոններով սահմանված մրցույթի մեկնարկից առաջ «Իզի Փեյ» ՍՊԸ-ին ենթակա են տրամադրման հերթափոխային աշխատանքների գրաֆիկները՝ ըստ օրերի և ժամերի, դեղագետի անուն ազգանունը, հեռախոսահամարը:

1.6. Մրցույթի ամենամսյա ամփոփմամբ ԷՎՀ-ի միջոցով ամենաշատ քանակով վճարումներ ընդունած թվով երեք դեղատներին կամ դեղագետներին, եթե առկա է հերթափոխային կարգ և վճարների ընդունումը վերաբերում է դեղատան նույն մասնաճյուղին, որոնք ի թիվս քանական տվյալի ապահովել են ԷՎՀ-ով կատարված գործարքների ընդհանուր քանակի առնվազն 20 /քսան/ տոկոսի արժեքի գերազանցումը 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամից, տրամադրվում են ֆինանսական մրցանակներ ներքոնշյալ աստիճանով՝

Վճարումների ընդունման քանակական ծավալով՝ առավելագույնից նվազման կարգով՝
1-ին հորիզոնականին՝ 30,000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ,
2-րդ հորիզոնականին՝ 20,000 /քսան հազար/ ՀՀ դրամ,
3-րդ հորիզոնականին՝ 10,000 /տաս հազար/ ՀՀ դրամ:

Ընդ որում՝ սույն կետով սահմանված որպես մրցանակ տրամադրվող դրամական միջոցները չեն ներառում ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված հարկերը:

1.7. Սույն կանոնների 1.6 կետով սահմանված մրցանակները տրամադրվում են «Gedeon Richter» (հայերեն տարադարձությամբ՝ «Գեդեոն Ռիխտեր») ապրանքային նշանով շահագործվող դեղատների ցանցի մրցանակների արժանացած դեղագետներին վերջիններիս **«Easy Wallet»** էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշիվներին հաշվեգրելու միջոցով: Սույն կետով սահմանված դեղագետների կողմից **«Easy Wallet»** էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշիվ չունենալու դեպքում այն ենթակա է գրանցման:

1.8. Մրցանակ հանդիսացող ֆինսանակն միջոցի հաշվեգրման առավելագույն ժամկետը մեկ ամիսն է: Այսինքն, «Gedeon Richter» (հայերեն տարադարձությամբ՝ «Գեդեոն Ռիխտեր») ապրանքային նշանով շահագործվող դեղատների ցանցի մրցանակների արժանացած դեղագետի կողմից **«Easy Wallet»** էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշիվ չգրանցելու, գրանցումից հրաժարվելու, ինչպես նաև անհասանելիության այլ դեպքերում մրցանակի արժանացումը չեղարկվում է:

1.9. Մրցույթով սահմանված վճարումների քանակական պայմանի չափանիշին չեն համապատասխանում մեկ գործարքի բաղդատումը, այսինքն իրար հաջորդող վճարումներով ԷՎՀ-ի մեկ հաշվառման հաշվով կատարված գործարքները: Տվյալ դեպքում մինչև 5 /հինգ/ րոպեի պարբերականությամբ ԷՎՀ-ի մեկ հաշվառման հավով կատարված վճարումները հաշվարկվում են որպես մեկ գործարք:

1.10. Մրցույթով սահմանված վճարումների քանակական պայմանի չափանիշին չեն համապատասխանում մրցույթին մասնակցող դեղագետների ԷՎՀ-ի հաշվառման հաշիվների միջոցով կատարված գործարքները:

1.11. Սույն կանոնների 1.6 կետում նշված մրցանակների ֆինանսական միջոցները հաշվեգրվում են մասնակցի էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշվում վարվող առանձին՝ «Easy Coins» վերնագրված ենթաբաժնում, որտեղից կարող է օգտատիրոջ հայեցողությամբ փոխանցվել հաշվառման հաշվին հասանելի դրական մնացորդին՝ ԷՎՀ-ի կանոնների համաձայն:

1.12. Չեղարկված գործարքները չեն հաշվեգրվում սույն կանոններով սահմանված քանակական պայմանին:

1.13. Ակցիային կարող են մասնակցել **«Easy Wallet»** ԷՎՀ բջջային հավելվածը ներբեռնած, գործարկած, նույնականացված ցանկացած օգտատեր:

1.14. Սույն կանոնները կարող են միակողմանիորեն փոփոխվել Ընկերության կողմից՝ խմբագրված տարբերակը www.easypay.am կայքում հրապարկելու միջոցով:

1.15. Սույն կանոնները և նկարագրված բոլոր գործողություններն ու հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ: Կողմերի միջև առաջացող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճերի լուծումը կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվել իրավասու դատարանի քննությանը կամ Կողմերի միջև համապատասխան համաձայնության առկայության դեպքում՝ արտոնագրված հաշտարարի կամ արբիտրաժային տրիբունալի քննությանը:

1.16. Սույն կանոնները և մրցույթը գործում են սույն կանոնների 1.2 կետում նշված վերջնաժամկետի և սույն կանոնների 1.4 կետով սահմանված հաշվեգրման առավելագույն ժամկետների հաշվարկով: